ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 2-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 69-րդ հոդվածի 3-րդ մասով և Ճամբարակ համայնքի ավագանու 24.10.2024թ. N 107-Ա որոշումով.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող /վկայական՝ 12092024-05-0040/ Գ. Նժդեհի փող. 103/14 մառան հասցեում գտնվող 05-002-0102-0046 կադաստրային ծածկագրով 0.00119 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը իր շինությունով /մառանով/ ուղղակի վաճառքով օտարել Սարգիս Բորյանին:
2. Քաղաքացի Սարգիս Բորյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 4100 /չորս հազար հարյուր/ ՀՀ դրամ, իսկ ընդհանուր շինության /մառանի/ համար համայնքի վարչական բյուջե 900185061232 հաշվեհամարին վճարել 18000 /տասնութ հազար/ ՀՀ դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 11.11.2024 թվականի N 1324-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

2025 թ. հունվարի 08
ք. Ճամբարակ